

Սարգիս Արքեպ.ի Թէքիրտաղի Առաջնորդութենէն առեալ՝ ոմանք զինք Թէքիրտաղի կ'անուանեն: Սակայն, ինչպէս ստուգած եմ, կայ ուրիշ կաթողիկեայ Սարգիս Ա. Թէքիրտաղցի մը, որուն հետ մեր Սարգիսը կը շփոթուի: Եւ ահա՛ ինչպէս: Փափազեանց Իգն. Արքեպ. իր Եկեղեցական պատմութեան մէջ (Վենետ. 1848) կը գրէ հետեւեալը (էջ 936—7). Կաթողիկոսն «Ղուկաս ի գաւառէն Կարնոյ եղեւ յաջորդ Սիմոնի յամի տեառն 1780 եւ կալաւ զաթոռն զամս քսան: Էր սա յաշակերտութենէ Զարութիւն արքեպիսկոպոսի Բասենցոյ, եւ զի հմուտ էր ուղղափառ ճշմարտութեան՝ ուսեալ ի վարդապետէ իւրմէ, աշակերտակից նորին Սարգիս Արդապետ Թէքիրտաղցի գնաց առ նա ի գտանել հնարս միաբանութեան ազգին Հայոց ընդ եկեղեցւոյն Հռովմայ. բայց ի հակառակասիրութենէ միաբանից ոմանց Էջմիածնի չկարաց ի լրումն ածել զիղձս սրտին, այլ մատնեցաւ ի ձեռս նոցա, եւ խոշտանգեալ պէսպէս չարչարանօք եւ աքսորանօք զամս իւր հինգ, ապա ձեռնտուութեամբ շերակլի արքային Վրաց գաղտագնաց փախստեամբ զերծաւ ի Տփլիս եւ անտի յԵւրոպա: Առ նովին ժամանակաւ զնոյն անցս չարչարանաց եւ մահուան կրեաց եւ Տէր Սահակ երէց ախլիսացի, որպէս գրէ նա ինքն Սարգիս վարդապետ Թէքիրտաղցի»: Այս կտորը լաւ հասկընալով Մ. Ա. Մուրատեան (Պատմ. Հայաստ. եկեղ. Եղմ. 1872 էջ 592), նոյնը կը կրկնէ, իւր Թէ Ղուկաս կաթողիկոսն ըլլայ